



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ք. Ջերմուկ

23/օգոստոսի/2018 թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...7... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Մարգարյանը, աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը, Հերիեր գյուղի վարչական ղեկավար Անդրանիկ Աբրահամյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. Վարդան Հովհաննիսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 23-ի արտահերթ նիստի հետևյալ *օրակարգը*.

1.1. Դրամական հատկացումներ կատարելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

